

**ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԻՆԱՍՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ ՄԻՍՈՆԻ

**ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԺԲ.00.02- Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

**ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА НАЦИОНАЛЬНОЙ
АКАДЕМИИ НАУК РА**

МИНАСЯН ЛУСИНЕ СИМОНОВНА

**ОСНОВНЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА ЗАЩИТУ
ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ; СРАВНИТЕЛЬНЫЙ ПРАВОВОЙ АНАЛИЗ**

АФТОРЕФЕРАТ

диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Աշոտ Հայկի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Հովհաննես Միքայելի Ստեփանյան

իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Վահե Հովիկի Սայառյան

Առաջատար կազմակերպություն՝

Եվրոպական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (ք. Երևան, 0010, Արամի փ. 44):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

իրավաբանական գիտությունների թեկնածու



Ս. Արքահաճյան

Тема диссертации утверждена в университете «Гладзор»

Научный руководитель:

доктор юридических наук, профессор

А.А. Хачатрян

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор

О.М. Степанян

кандидат юридических наук, доцент

В.О. Саядян

Ведущая организация:

Европейский университет

Защита состоится 18 октября 2021 года в 14:00 на заседании специализированного совета 041 по Юриспруденции ВАК РА при Институте философии, социологии и права НАН РА (г. Ереван 0010, РА, г. Ереван, ул. Арама 44).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Института философии, социологии и права НАН РА.

Афтореферат разослан 7 сентября 2021 года.

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук



А.Абрамян

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում, տեղեկատվական հեղափոխության արդյունքում Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ, որը համաշխարհային գիտական և նորմատիվային համակարգում հայտնի է որպես՝ «տեղեկատվական հասարակություն»: Այս հասարակությունում, համաշխարհային հեռահաղորդակցման ցանցերի ստեղծմամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործմամբ, տվյալների մշակմամբ և արագ փոխանցումներով, էլեկտրոնային բազմադեմ անձնական տվյալների բազաների ստեղծմամբ՝ մարդը սկսում է կորցնել իր անձնական կյանքի նկատմամբ հսկողությունը:

Գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումները մեծ ազդեցություն ունեցան մարդու իրավունքների զարգացման վրա: Դրական միտումների հետ մեկտեղ, այսօր, առկա են որակապես նոր բնույթի սպառնալիքներ և մարտահրավերներ, որոնք պետություններից պահանջում են միջազգային տեղեկատվական դաշտում գործել այնպես, որպեսզի երաշխավորվի մարդու անձնական իրավունքների, այդ թվում՝ անձնական տվյալների պատշաճ համակարգումը, վերահսկումը և անվտանգությունը:

Տեղեկատվական արտահոսքի համաշխարհային հետազոտության արդյունքների համաձայն, որն իրականացվել է աշխարհահռչակ ԻնֆոՎոչ (InfoWatch) հետազոտողական կենտրոնի կողմից, 2018 թվականին գրանցվել է 1,039 միլիոն տվյալների արտահոսք, ինչն 12%-ով ավելին է քան 2017 թվականին: Այդ դեպքերը պարունակում էին 2.39 բիլիոն անձնական և ֆինանսական տեղեկատվություն, այդ թվում՝ սոցիալական անվտանգության համարներին, բանկային քարտերին, առողջությանը, ԴՆԹ-ին և այլնին վերաբերող կարևորագույն տվյալներ: Ընդ որում՝ տվյալների արտահոսք գրանցվել է այնպիսի խոշորագույն ընկերություններից, ինչպիսին են Ադիդասը (Adidas), Էփլը (Apple), ԲեՄՎեն (BMW), Բոինգը (Boeing), Միկրոսոֆտը (Microsoft), Փեյպալը (PayPal), Սոնին (Sony), Սկայպը (Skype), Վոտսափը (WhatsApp), ՅուԹյուբը (YouTube), ինչպես նաև ԱՄՆ Կենտրոնական հետախուզության գործակալությունը (CIA), ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոն (FBI), ԱՄՆ Անվտանգության դեպարտամենտը, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը, Չինաստանի ժողովրդական բանկը և այլն:

Ակնհայտ է, որ մարդկանց անձնական իրավունքները, տեղեկատվական անվտանգության տեսանկյունից, պետք է պաշտպանություն ստանան ոչ միայն օրենսդրական ամրագրմամբ, այլ նաև մարդու և քաղաքացու անձնական տվյալների պաշտպանության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու սահմանադրական իրավունքների իրագործմամբ և արդյունավետ պաշտպանությամբ:

Մինչդեռ, ազգային իրավական գրականությունում անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքը բավականաչափ ուսումնասիրված չէ, քանի որ բացակայում է այդ իրավունքի կառուցվածքի, բովանդակության և առանձնահատկությունների վերաբերյալ մեկ միասնական մոտեցումը: Բացակայում է նաև

«անձնական կյանք» «անձնական տիրույթ», «տվյալներ», «անձնական տեղեկատվություն» և «անձնական տվյալներ» հասկացությունների հստակ մեկ միասնական բնորոշումը, ինչը դրանց իրագործման և պաշտպանության պրակտիկայում շարունակում է առաջացնել իրավական կոլիզիաներ:

Գիտական ուսումնասիրությունների և վերլուծության անհրաժեշտությունն ունի անձնական տվյալների պաշտպանության և անձնական տիրույթի իրավունքների՝ որպես առանձին ինստիտուտների հարաբերակցությունը, ինչպես նաև արտասահմանյան փորձի և միջազգային կառույցների՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրավական երաշխիքների համեմատությունը, ՀՀ օրենսդրական դաշտում արդի հիմնախնդիրների վերհանումը:

Թեմայի արդիականությունը հաստատվում է նաև այն փաստով, որ օրեցօր աճում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների հիմքով ձևավորվող դատական նախադեպերը, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ արտերկրում:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության ինտեգրումը միջազգային հանրությանը, տնտեսական և սոցիալական գործընթացների գլոբալիզացիան, տեղեկատվական հեռահաղորդակցության տեխնոլոգիաների շարունակական զարգացումը և մի շարք այլ հանգամանքներ՝ նպաստեցին վերը նշված խնդիրների ուսումնասիրման արդիականությանը հայկական և օտարերկրյա սահմանադրաիրավական կարգավորումներում:

Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի գիտական խնդիրների բացահայտումն ու բովանդակության հստակեցումը՝ սկզբունքորեն հանդիսանում են սահմանադրական իրավունքի՝ որպես գիտության զարգացման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի զարգացման համար կարևոր գործոններ:

Թվարկված հանգամանքները բնորոշում են ատենախոսության արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը, դիտարկվող խնդիրների կազմն ու բնույթը:

Ատենախոսության թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Հայրենական իրավագիտության մեջ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի դերի, նշանակության և բովանդակության հիմնահարցերը երբևէ առանձին համալիր գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Ավելին, այս իրավունքի սահմանադրաիրավական ընկալման հիմնախնդիրները երբևէ գործնականում չեն հետազոտվել և առանձին համեմատական վերլուծության առարկա չեն հանդիսացել:

Ատենախոսության մեջ քննարկվել են մի շարք խնդիրներ, որոնք մեծամասամբ ներկայացվել են օտարերկրյա իրավաբան գիտնականների տարբեր աշխատություններում: Մույն ատենախոսության գիտական արժեքը կայանում է նրանում, որ հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ է արվել համալիր կերպով ուսումնասիրել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ուսումնասիրվող իրավունքի գործնական զարգացումը շատ ավելի արագ է ընթանում, քան դրա օրենսդրական կարգավորումները, տեսական հիմնավորումներն ու ուսումնասիրությունները: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ առկա խնդրի լուծման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ինչը և կանխորոշեց այս հետազոտության նպատակը, խնդիրներն ու մեթոդաբանական հիմքը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման պատմության, միջազգային փորձի, դրա իրացման արդի հիմնախնդիրների, առկա մարտահրավերների, զարգացման միտումների և առաջիկա հեռանկարների համալիր համեմատական ուսումնասիրությունը, անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման համար կարևոր տեսությունների մշակումն ու հիմնավորումը, ինչպես նաև՝ այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք հնարավորության կտան մարդուն և քաղաքացուն գործնականում իրացնել իրենց անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխիքները:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտության հետևյալ գիտական *խնդիրները՝*

ա) ուսումնասիրել անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրավական հիմքի ձևավորման ու զարգացման պատմական նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում,

բ) իրականացնել անձնական տվյալների պաշտպանության եվրոպական և ամերիկյան մոդելների համեմատական իրավական հետազոտություն և վերլուծություն,

գ) բացահայտել «անձնական տվյալ» հասկացության բովանդակությունը և տարբերությունները «անձնական տեղեկատվություն» իրավական կատեգորիայից,

դ) առաջադրել «անձնական տվյալ» հասկացության արդիական և կիրառելի սահմանում, որը կարտահայտի ոչ միայն այդ երևույթի ժամանակակից ընկալումները, այլև համահունչ կլինի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

ե) հետազոտել «անձնական տիրույթի իրավունքի» և «անձնական տվյալների պաշտպանության իրավունքի»՝ որպես երկու նոր սահմանադրական ինստիտուտների հարաբերակցությունը,

զ) կատարել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքի համեմատական վերլուծություն,

ա) հետազոտել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի կայացման և ձևավորման հայկական փորձը և ժամանակակից իրավակարգավորումները,

ե) բացահայտել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխավորման հիմքերը և սահմանափակման հիմնական սկզբունքները,

ը) վեր հանել Հայաստանի Հանրապետությունում սույն իրավունքի իրացման հետ կապված ներկայիս հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման գործուն և արդյունավետ ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը սահմանադրաիրավական այն հարաբերություններն են, որոնք կապված են մարդու և քաղաքացու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրացման, ձևավորման, օգտագործման և պաշտպանության ապահովման, ինչպես նաև՝ առկա հիմնական միտումների, հետագա զարգացման ու կատարելագործման հեռանկարների հետ:

Հետազոտության առարկա են հանդիսանում այն սահմանադրաիրավական նորմերը, որոնք կարգավորում են անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առկա հասարակական հարաբերությունները, ՀՀ օրենսդրությունը, արտասահմանյան երկրների օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, գիտական վերլուծական միտքը, ՀՀ և այլ պետությունների սահմանադրական դատարանների, բարձրագույն դատական այլ ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան, ինչպես նաև անձնական տվյալների բնույթի և բովանդակության վերաբերյալ գաղափարներ և կոնցեպցիաներ սահմանող գիտական դոկտրինները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես հայրենական գիտական մտքին հատուկ ավանդական ընդհանուր գիտական մեթոդներ՝ դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական, ընդհանրացման, ինդուկտիվ, դեդուկտիվ մեթոդները, այնպես էլ մի շարք առավել ժամանակակից հատուկ իրավական մեթոդներ, որոնք Արևմտյան Եվրոպայի գիտական ավանդույթի համաձայն բնորոշվում են հետազոտության միջճյուղային, ինտեգրացվող և գլոբալիզացվող մոտեցումներով: Նման մեթոդներ են հանդիսանում՝ ա) իրավական հերմենևտիկան, որով հնարավոր է դարձել բացահայտել անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտի մի շարք իրավական հասկացությունների իրական բնույթն ու բովանդակությունը, ստեղծել իրավական նորմերի բովանդակության առավել արդյունավետ ընկալման, իրավական ակտի ընդունման նպատակի բացահայտման և իրական համակարգը հասկանալու մեթոդաբանական հիմք, բ) պատմական-իրավական մեթոդը, որով հնարավոր է դարձել հետազոտել «անձնական տվյալներ» իրավական երևույթի առանձնահատկությունը որոշակի պատմական ժամանակաշրջանում, վերլուծել դրա ձևավորման պատմական նախապայմանները և դուրս բերել զարգացման հիմնական հեռանկարները, գ) համեմատական-իրավական մեթոդը, որով համադրվել են իրավական հասկացությունները, երևույթներն ու գործընթացները և հետազոտվել դրանց նմանությունները, բնորոշ հատկանիշներն ու տարբերությունները, ինչի արդյունքում դուրս են բերվել իրավական համակարգերի, առանձին ինստիտուտների և նորմերի որակական չափանիշները, գնահատվել արդյունքները, զարգացման օրինաչափությունները կամ դրանց բացակայությունը, ձևավորվել են նոր հասկացություններ, դասակարգումներ, օրենսդրության կատարելագործման առաջարկներ:

Ատենախոսությունում փորձ է արվել հիշյալ մեթոդների համակցված կիրառությամբ՝ յուրաքանչյուր գլխում առանձին վեր հանել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում ներկայումս առկա խնդրահարույց հարցադրումները, և առաջարկել այդ հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ և գործուն կառուցակարգեր՝ միաժամանակ, պահպանելով հետազոտության տրամաբանական ամբողջությունն ու հետազոտության նպատակը՝ այդպիսով, որոշ չափով, նպաստելով Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության ամրապնդմանն ու զարգացմանը:

Հետազոտության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքը կազմել են սահմանադրական իրավունքի, պետության և իրավունքի տեսության, տեղեկատվական իրավունքի, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի, անձնական կյանքի իրավունքի, վարչական իրավունքի ընդհանուր գիտական և գիտամեթոդական աշխատությունները: Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են հետևյալ հեղինակների աշխատանքները՝ Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան, Ռ.Ֆ.Աբդեև, Ի.Ա.Վելդեր, Ն.Վիներ, Պ.Ու.Կուզնեցով, Վ.Ն.Լոպատին, Ա.Ս.Ֆեդոսին, Լ.Կ.Տերեշինկո, Ա.Ա.Ստրելցով, Յ.Վ.Տրավկին, Հ.Քելերի-Սմուգ, Ա.Վ.Բրեդլի, Ջ.Կամերոն, Ա.Կլաֆամ, Ֆ.Ս.Չլպայովսկի, Ջ.Ֆեդկե, Մ.Հանթեր-Հանին, Մ.Վ.Յանիս, Ռ.Ս.Կեյ, Ջ.Ֆիննիս, Ա.Լիպտակ, Ա.Լուկաս-Շլոտեր, Բ.Սարկեսինիս, Մ.Սլֆարլանդ, Ա.Օհլի, Ս.Լ.Ռեյերս, Ս.Դ.Վորրեն, Ռ.Յանգս և մյուսներ:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Աշխատության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, փոխկապակցված այլ օրենքները, ինչպես նաև ենթաօրենսդրական այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը, պաշտպանությանը և կիրառմանը: Աշխատանքում հատուկ ուշադրություն է հատկացվել միջազգային իրավական ակտերի ուսումնասիրությանը, որոնց շարքում հատուկ տեղ են զբաղեցնում 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան և 1981թ. հունվարի 28-ին ընդունված Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան, ինչպես նաև Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունած վերպետական իրավական ակտերը: Բացի վերոնշյալից՝ հետազոտության իրավական հիմքն են կազմում անձնական տվյալների պաշտպանության իրավունքը կարգավորող այնպիսի երկրների սահմանադրություններն ու նորմատիվ իրավական ակտերը, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Եվրոպական Միությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Իսրայելը, Չեխիան, Ռուսաստանը, Արգենտինան, Չինաստանը և այլն:

Հետազոտության էմպիրիկ հիմքը: Հետազոտության էմպիրիկ հիմքն են կազմում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական միության արդարադատության դատարանի, ՀՀ և այլ երկրների դատարանների դատական

պրակտիկան, միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական Միության վերլուծական և վիճակագրական նյութերը, Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրացման, իրավակիրառ պրակտիկայի նյութերը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ համապարփակ վերլուծության է ենթարկվել մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի էությունն ու սահմանադրաիրավական բովանդակությունը, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես առանձին սահմանադրաիրավական ինստիտուտի, ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները՝ բացահայտելով այդ իրավունքի տեղն ու դերը, մարդու սահմանադրական մյուս իրավունքների համատեքստում, ինչպես նաև հետազոտվել է անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ծագման և զարգացման պատմական գործընթացը, այս ինստիտուտի ձևավորման ամերիկյան և եվրոպական մոդելները, «անձնական տիրույթի» և «անձնական տվյալների պաշտպանության» իրավունքների հարաբերակցությունը, տրվել է «անձնական տվյալ», «անձնական տեղեկատվություն», «տեղեկատվություն», «տվյալ», հասկացությունների միանգամայն նորովի սահմանում, առաջադրվել է անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների հիմնախնդիրների գործառնական լուծումներ:

Համալիր ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի տեսական եզրահանգումներ, այլ նաև ներկայացվել են ՀՀ գործող օրենսդրական ակտերի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ, սահմանվել են նոր հասկացություններ, առաջադրվել՝ գիտական կոնկրետ մոտեցումներ, անձնական տվյալների պաշտպանության շրջանակներում՝ մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության ընթացքում արված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի համակարգը հանդիսանում է եվրոպական մոդելի դրսևորում, շնորհիվ մի քանի հատկանիշների՝ ա) իրավունքի ամրագրումը մեկ միասնական փաստաթղթում, բ) և՛ մասնավոր, և՛ հանրային ոլորտների համար անձնական տվյալների մշակման ընդհանուր պահանջների ձևավորում, գ) վերահսկողություն իրականացնող մեկ լիազոր մարմնի առկայություն, դ) սեփական անձնական տվյալները վերահսկելու անձի անօտարելի իրավունքի ամրագրում՝ երկրի հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում:

2. Կարևորելով մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի շրջանակում մասնավոր կյանք (private life), անձնական կյանք (personal life) և անձնական տիրույթի իրավունք (privacy) իրավական որոշակի կառուցակարգերի գործառնական նշանակությունը, որոնք հաճախ նույնացվում են՝ և՛ մասնագիտական գրականությունում, և՛ ՀՀ օրենսդրությունում, ստեղծելով թյուրընկալումներ, ատենախոսությունում բացահայտվել են՝ նշված յուրաքանչյուր հասկացության շրջանակները, որի արդյունքում սահմանվել է նոր իրավական կատեգորիա, նոր հասկացություն՝

«Անձնական տիրույթի իրավունք» (right to privacy), որպես անձին հանգիստ թողնելու իրավունք, վերացական և առարկայական տարածք, որն իր մեջ ներառում է տարածքային, սեփական մարմնի, բնավորության, զգացմունքների և արժանապատվության, ընտանեկան կյանքի, ներքին համոզմունքների, տեղեկատվական անձնական տիրույթ ունենալու և մենակ մնալու յուրաքանչյուրի իրավունքը:

3. Աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը թեև ձևավորվել է անձնական տիրույթի իրավունքի համատեքստում, ներկայումս հանդիսանում է սամանադրական իրավունքի առանձին ինքնուրույն ինստիտուտ, որն իր երաշխավորված անձնական իրավունքների ծավալով, բնույթով, պաշտպանության առարկայով, բովանդակող սկզբունքներով և առարկայական պաշտպանության ձևերով սկզբունքորեն տարբերվում է անձնական տիրույթի իրավունքից:

4. Կարևորելով այն հանգամանքը, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը տարբերվում է դասական մարդու հիմնարար իրավունքներից՝ ատենախոսությամբ հիմնավորվում է այն դիրքորոշումը, ըստ որի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը ՀՀ իրավական համակարգում առաջին անգամ ձևավորվում է որպես՝ մարդու իրավունքների և սահմանադրական իրավունքների sui generis հիբրիդ՝ հիմք ընդունելով հետևյալ կառուցակարգերը՝ ա) ի տարբերություն մյուս մարդու իրավունքների, որոնց պաշտպանության կանխավարկածը այն է, որ պետությունը, որպես կանոն, չպետք է սահմանափակի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ապա անձնական տվյալները պետք է և ցանկալի է, որ ենթարկվեն մշակման, այդ թվում՝ պետության կողմից, բ) անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պաշտպանում է երկու բոլորովին տարբեր արժեքներ, այն է՝ 1) իրենց անձնական տվյալները պաշտպանելու մարդկանց իրավունքը 2) անձնական տվյալները մշակողների՝ ՀՀ տարածքում անձնական տվյալներ մշակելու իրավունքը, հետևաբար, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն, արդեն իսկ, մարմնավորում է տվյալների սուբյեկտների և տվյալների մշակողների իրավունքների և շահերի միջև փոխզիջումը:

5. Ուսումնասիրելով ՀՀ ամբողջ օրենսդրական համակարգը՝ դուրս են բերվել թվով 38 նորմատիվ իրավական ակտեր, (տե՛ս Հավելված 1) որոնց հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ ՀՀ ամբողջ իրավական համակարգում բացակայում են «տվյալներ»(data) «տեղեկություն»(info), «տեղեկատվություն»(information) և

«Անձնական տեղեկատվությունը» անձի անձնական տիրույթի մասին տեղեկությունների, երևույթների, գործընթացների, գիտելիքների, պատկերացումների ամբողջությունն է, որը գոյություն ունի օբյեկտիվ ընկալման համար ցանկացած ձևաչափով:

«Անձնական տվյալը»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին (տվյալների սուբյեկտ) ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերող, ամբողջությամբ կամ մասամբ համակարգված ավտոմատիզացված միջոցներով մշակված անձնական տեղեկատվությունն է, որի հիման վրա հնարավոր է նույնականացնել անձին, և որի մշակումը էական ազդեցություն կունենա մարդու անձնական իրավունքների և ազատությունների վրա:

8. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ Սահմանադրության 34-րդ հոդվածը չի ամրագրում «անձնական տվյալների պաշտպանության իրավունքի» սահմանափակման հնարավորությունները, այլ ամրագրում է միայն «անձնական տվյալների ծանոթանալու իրավունքի» սահմանափակումները, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարել ՀՀ Սահմանադրությունում՝ 34-րդ հոդվածի 4-րդ մասում «ծանոթանալու» բառը փոխարինելով «պաշտպանության» բառով:

9. Սահմանադրական նորմերի համակարգային վերլուծության արդյունքներով հիմնավոր է համարվել հետևյալ առաջարկության կարևորությունը, որ անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների հիմքերը կարող են լինել օրինական, միայն էթե՝ ա) սահմանված են Սահմանադրությամբ կամ օրենքով, բ) պահպանում են սահմանադրության նպատակների լեգիտիմությունը, գ) սահմանափակման համար ընտրված միջոցները՝ պիտանի, անհրաժեշտ և համաչափ են սահմանադրությամբ պաշտպանվող նպատակներին, դ) սահմանափակման համար ընտրված միջոցները համարժեք են սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը, ե) հարգում են հիմնարար իրավունքների և ազատությունների էությունը, զ) հարգում են հիմնարար իրավունքների և ազատությունների որոշակիությունն ու կանխատեսելիությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրավակարգավորումների ոլորտում մշակվել են նոր գիտական առաջարկություններ և դիտարկումներ, որոնք հիմնված են եղել ոլորտի տեսական և գործնական բազայի ուսումնասիրության հիման վրա:

Բոլոր առաջարկներն ու դիտարկումները ձևավորվել են ատենախոսության հետազոտության հիման վրա, որը կարելի է համարել սահմանադրական իրավունքի տեսության մեջ յուրօրինակ ներդրում: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ոլորտի սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման հետագա տեսական հետազոտությունների համար: Առաջարկների, դիտարկումների և հետևությունների արժանահավատությունը տեսականորեն հիմնավորված է

հետազոտության ընթացքում օգտագործված գիտական մեթոդոլոգիայով, գիտական և նորմատիվային աղբյուրների լայն շրջանակով:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել են այնպիսի առաջարկներ և դիտարկումներ, որոնք կարող են օգտագործվել ՀՀ օրենսդրության իրավաստեղծ գործունեության կատարելագործման ընթացքում:

Հեղինակի կողմից մշակվել են հստակ առաջարկներ, որոնք միտված են լուծելու անձնական տվյալների պաշտպանության, սահմանադրական իրավունքի իրագործման և սահմանադրական պաշտպանության ընթացքում առաջացած հստակ խնդիրները, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական ամրագրման և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հստակ դրույթների կատարելագործման մասով:

Հետազոտությունը կարող է օգտագործվել բակալավրի կամ մագիստրոսական մասնագիտացման ծրագրերի շրջանակներում, որպես դասավանդվող նյութ, այնպիսի առարկաների համար, ինչպիսին են՝ «Սահմանադրական իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Անձնական տվյալների պաշտպանության իրավունք», «Անձնական տիրույթ իրավունք», «Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք» «Տեղեկատվական իրավունքը», «Տեղեկատվական անվտանգության հիմունքներ», դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է անձնական տվյալների պաշտպանության, անձնական տիրույթի, տեղեկատվական անվտանգության, մասնավոր կյանքի պաշտպանության, մարդու իրավունքների հետ:

Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել իրավաստեղծ գործունեության իրականացմանը՝ ՀՀ Սահմանադրության և ընթացիկ օրենսդրական դրույթների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական արդյունքները տեղ են գտել հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են հեղինակավոր գիտական հանդեսներում և մենագրության մեջ: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև տարբեր կոնֆերանսների, սեմինարների և առանձին քննարկումների շրջանակներում՝ Հայաստանում և արտերկրում:

Ատենախոսության կառուցվածքը: Հիմք ընդունելով առաջադրված նպատակներն ու խնդիրները և հետազոտության տրամաբանությունը՝ ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, ութը ենթագլխից, ամփոփումից, 2 հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է 161 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության մեթոդաբանական, տեսական, իրավական հիմքը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման հիմնախնդիրները»** վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**«Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալները՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի համատեքստում»**) բացահայտվում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքից ածանցված նոր ինստիտուտի առաջացման պատմաիրավական հիմքերը, իրավունքի զարգացման շրջափուլերը և վերլուծվում են այդ իրավունքի զարգացման ամերիկյան և եվրոպական մոդելների առանձնահատկությունները, դրական և բացասական կողմերը, ինչպես նաև հաստատվել է Հայաստանի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության իրավական համակարգի պատկանելիությունը եվրոպական մոդելին:

Երկրորդ ենթագլխում (**«Անձնական կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքից ածանցված երկու ժամանակակից նոր ինստիտուտների՝ «անձնական տիրույթի» և «անձնական տվյալների պաշտպանության» իրավունքների հարաբերակցությունը»**) հետազոտության են ենթարկվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի տարրերի՝ մասնավոր կյանքի, անձնական կյանքի, անձնական տիրույթի և անձնական տվյալների առանձնահատկությունները, բնույթը, բովանդակությունը և քննարկվում են «անձնական տիրույթի» և «անձնական տվյալների պաշտպանության» իրավունքների տարբերությունները և դինամիկ հարաբերակցությունը:

Երրորդ ենթագլխում (**«Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես սահմանադրական իրավունքի հիմնարար ինստիտուտի հիմնախնդիրները»**) բացահայտվում են «անձնական տվյալների պաշտպանության իրավունքի» հիմնարար տարբերությունները «անձնական տիրույթի իրավունքից» և հաստատվում է առանձին, ինքնուրույն ինստիտուտի կայացման իրավական հիմքերը, բնորոշ հատկանիշները և բովանդակող առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնախնդիրները «անձնական տվյալ» հասկացության բովանդակության խորապատկերում»** վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**««Անձնական տվյալ» հասկացության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգում»**) հեղինակը համալիր վերլուծության ենթարկելով ամբողջ ՀՀ նորմատիվ

իրավական համակարգը՝ առանձնացրել է 38 նորմատիվ իրավական ակտեր, որոնցում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ նշված իրավական ակտերի ներդաշնակեցում և/կամ ունիֆիկացիա:

Երկրորդ ենթագլխում («**Անձնական տվյալ» հասկացության իրավական կարգավորումը արտասահմանյան երկրների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի համակարգերում**») հեղինակը ամփոփ կերպով անդրադառնում է միջազգային փորձին ուսումնասիրելով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Եվրոպայի Խորհրդի, Անկախ պետությունների համագործակցության երկրների, ինչպես նաև Եվրոպական Միության, Ճապոնիայի, Չինաստանի, Իսրայելի, Արգենտինայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքին վերաբերող իրավակարգավորումները և կատարել է համեմատական իրավական վերլուծություն Հայաստանի Հանրապետության ներկայիս գործող կառուցակարգերի հետ:

Երրորդ ենթագլխում («**Անձնական տվյալ» հասկացության բովանդակության առանձնահատկությունները՝ որպես սահմանադրական իրավունքի պաշտպանության օբյեկտ**») բացահայտվում են «տեղեկատվություն» (information) և «տվյալներ» (data) հասկացությունների էությունը, տեսական լայն գրականության մեջ արտացոլված տեսությունները և միջազգային իրավական ակտերով սահմանված առանձնահատկությունները:

Ստեղծագործության երրորդ գլուխը՝ **«Անձի անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխիքները»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում («**Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների հիմնախնդիրները 22 Մահմանադրության 34-րդ հոդվածի համատեքստում**») հեղինակը անդրադառնում է Մահմանադրության 34-րդ հոդվածով սահմանված «անձնական տվյալների պաշտպանության իրավունքի» և «անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքի» սահմանափակումների առանձնահատկություններին, հնարավորություններին և իրավական հստակեցման անհրաժեշտության հիմնավորումներին:

Երկրորդ ենթագլխում («**Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների շրջանակները որոշակիության, համաչափության և իրավունքի անխախտելիության սահմանադրական սկզբունքների համատեքստում**») հետազոտության են ենթարկվում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանափակումների իրավաչափությունը՝ անձանց մասնավոր իրավունքների և ամբողջ հասարակության հանրային իրավունքների և օրինական շահերի համեմատության և հավասարակշռման համատեքստում, ինչպես նաև՝ վերլուծվել են այդ սահմանափակումների օրինականության հիմքերը:

Ամփոփման մեջ շարադրված են հետազոտության հիմնական արդյունքները, եզրակացությունները, որոնք ներկայացվում են ստորև.

1. Վերլուծելով անձնական տվյալների պաշտպանության իրավունքի առաջացման և կայացման հիմքերը, զարգացման ուղիները՝ որպես անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի անբաժանելի մասի, սահմանվել են այդ իրավունքի զարգացման հետևյալ շրջափուլերը՝

ա) Հին աշխարհում անձնական կյանքը որակվում էր, որպես յուրաքանչյուրի քաղաքացիական պարտավորությունները կատարելու միջոց, քանի որ ենթադրվում է, որ քաղաքացիները ապրում էին միայն պետության համար:

բ) Միջին դարերում անձնական կյանքը բնորոշվում էր հասարակական խավի պատկանելությամբ, երբ մարդը չէր տարանջատում թե՛ երբ է հանդես գալիս որպես «հանրային անձ» և՛ որ՝ «մասնավոր անձ»:

գ) 19-րդ դարի երկրորդ կեսին Ֆրանսիայում առաջին անգամ անձի անվան և անձի պատկերի իրավունքը դուրս բերվեց սեփականության իրավունքի համատեքստից և ինքնուրույն պաշտպանություն ստացավ:

դ) 1890 թվականին, ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեյզը, ով Ս.Գ. Ուորենի հետ համահեղինակությամբ հրատարակված «Անձնական տիրույթ ունենալու իրավունքի մասին» հոդվածը հիմք դրեց անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ժամանակակից ընկալման գործընթացին:

2. Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում, ավանդաբար, սահմանադրությունները մասնավոր կյանքի, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ուղղակի նորմեր չեն պարունակում, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայում առհասարակ բացակայում է գրված Սահմանադրությունը, իսկ Լոռդերի պալատը սահմանել է, որ նման իրավախախտումները բացակայում են Մեծ Բրիտանիայի ընդհանուր իրավական համակարգից, քանի որ ունեն բավականին անորոշ բնութագրեր: Ամերիկայի Միացյալ Նահանգներում անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները դուրս են բերվել դատական նախադեպերի միջոցով՝ Սահմանադրության 4-րդ, 5-րդ և 14-րդ լրացումներից:

3. Ամերիկայի Միացյալ Նահանգների անձնական տվյալների պաշտպանության իրավունքներ համակարգում գործում է մրցակցող իրավունքների միջև ընտրություն կատարելու «հավասարակշռման մեխանիզմը», որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, տեղեկատվության մասին որոշումներ ընդունելիս՝ ա) անձնական տեղեկատվության բացահայտման դեպքում՝ անձին հասցվող վնասի չափը բ) անձնական տեղեկատվության բացահայտման դեպքում՝ պաշտպանության մեթոդներն ու մեխանիզմները գ) տեղեկատվության բացահայտման հասարակական շահագրգռվածության աստիճանը:

4. Անգլոսաքսոնական իրավական համակարգում առաջացած նախադեպերը սահմանափակ կիրառելիություն ունեն և կարգավորում են միայն առանձին հանգամանքներում՝ առանձին իրավիճակներ, հակասում են իրար և լի են օրենսդրական բացերով, իսկ որոշ ոլորտներում՝ առհասարակ պաշտպանություն չեն ապահովում:

5. Վերլուծելով օտարերկրյա և միջազգային պրակտիկան՝ կարելի է պայամանականորեն ընդգծել անձնական տվյալների իրավական կարգավորման երկու հիմնական մոդել՝ եվրոպական և ամերիկյան: Եվրոպական մոդելի հիմնական բնութագրիչ հատկանիշներն են՝ ա) անձնական տվյալները վերահսկելու անձի անօտարելի իրավունքը՝ որպես ժողովրդավարական հասարակությունում անձի «տեղեկատվական ինքնանույնականացման» մաս, բ) մեկ միասնական իրավական ակտի առկայությունը, որը սահմանում է անձնական տվյալների մշակման ընդհանուր պահանջներ և՛ մասնավոր, և՛ հանրային ոլորտների համար, գ) անձնական տվյալների օրենսդրության պահպանումը վերահսկող մեկ միասնական լիազորված մարմնի առկայություն, դ) մասնավոր ոլորտում իրավահարաբերությունների ինքնակարգավորումը՝ որպես լրացուցիչ մեխանիզմ:

6. Ամերիկյան մոդելի համար հիմնական բնութագրիչ հատկանիշներն են՝ ա) «անձնական տիրույթ» հասկացության օգտագործումը և՛ մասնավոր և՛ հանրային ոլորտում, որը սահմանափակում է մարդու անձնական կյանքին պետության և պետական մարմինների միջամտությունը, բ) մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խնդիրների իրավական կարգավորման ճյուղային մոտեցումը, որտեղ օրենսդրական մակարդակում ամենից կարգավորված ոլորտը, հանդիսանում է «հանրային ոլորտը», գ) տնտեսության և՛ մասնավոր, և՛ հանրային ոլորտների համար՝ անձնական տվյալների պաշտպանության միասնական սկզբունքներ սահմանող, մեկ միասնական փաստաթուղթի բացակայությունը, դ) տնտեսության մասնավոր ոլորտի՝ անձնական տվյալների պաշտպանությունը կարգավորող օրենսդրության մեջ շուկայական մեխանիզմների գերակայումը, ինչպես նաև մասնավոր ընկերությունների կողմից տվյալների մշակման իրավական կարգավորման խնդիրների գնահատումը՝ «բարեխիղճ մրցակցության» և «օգտատերերի իրավունքների պաշտպանության» տեսանկյունից, ե) անձնական տվյալների պաշտպանության ոլորտում՝ օրենսդրության պահպանման վերահսկողություն կատարող մեկ, միասնական պատասխանատու մարմնի բացակայությունը:

7. ՀՀ իրավական նորմատիվային բազայում և գիտական մակարդակում բացակայում են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի տարրերի՝ մասնավոր կյանքի, անձնական կյանքի, անձնական տիրույթի և անձնական տվյալների տարանջատմանը, վերլուծությանը, համադրմանն ու համեմատությանը նվիրված ուսումնասիրությունները, ձևակերպումները, որոնք հստակ սահմաններ են գծում միմյանց հետ շաղկապված, բայց միմյանցից տարբեր իրավական ինստիտուտների միջև, որոնք պայմանականորեն կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ ա) յուրաքանչյուր մարդ ազատ է ինքնուրույն զարգացնելու և իր համար իմաստավորելու «մասնավոր կյանքը (private life)» տարողունակ հասկացությունը, քանի որ հնարավոր չէ այն արտացոլող մեկ բովանդակալից սահմանում տալը, բ) «անձնական կյանք (personal life)» հասկացությունը նշանակում է այլ մարդկանց և արտաքին աշխարհի հետ հարաբերություններ ունենալու իրավունք, այդ թվում՝ մասնագիտական և աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև անձի ինքնության, սեռական կողմնորոշման, ներանձնային հարաբերությունների, ընտանեկան

կապերի հետ կապված հարաբերությունները և այլն, գ) անձնական տիրույթը (privacy) հատուկ իրավական կատեգորիա է անգլոամերիկյան իրավական համակարգում, որը նշանակում է անձնական կյանքի գաղտնիություն և անձեռնմխելիություն, մարդու կյանքի անձնական ոլորտ, անձնական տիրույթ և այլն:

8. «Անձնական կյանքը» և «մասնավոր կյանքը» հանդիսանում են միմյանց հետ շաղկապված, բայց ոչ նույնական հասկացություններ և ընկալվում են՝ որպես ընդհանուր և հատուկ հասկացություններ, որտեղ անձնական կյանքը հանդիսանում է մասնավոր կյանքի մի մասը և ներառում է նաև այլ մարդկանց և արտաքին աշխարհի հետ հարաբերություններ ունենալու իրավունքը:

9. «Անձնական տիրույթը» նոր օգտագործվող իրավական տերմին է, որ բացակայում է հայկական իրավական համակարգում և կարող է ունենալ մի քանի նշանակություն՝ ա) տարածքային անձնական տիրույթը ներառում է անձնական տիրույթի պաշտպանությունը և՛ հանրային և՛ մասնավոր վայրերում, բ) մարմնի անձնական տիրույթը վերաբերում է մարդու մարմնին, որոնք են արտաքին ֆիզիկական գնությունը, բժշկական հետազոտությունները, նույնականացումը, մատնահետքերը և այլն, գ) բնավորության, զգացմունքների և արժանապատվության անձնական տիրույթը համարվում է մարդկային արժանապատվության առավել լայն հասկացություն զ) ընտանեկան կյանքի անձնական տիրույթը ներառում է բոլոր տվյալները, բացառությամբ հանրային հասանելիության տվյալների՝ ծննդյան, ամուսնության, մահվան, մայրության, որդեգրության և այլն, ե) ներքին համոզմունքների անձնական տիրույթը բովանդակում է կրոնական, քաղաքական, փիլիսոփայական և այլ հայացքներ ու համոզմունքներ, զ) տեղեկատվության անձնական տիրույթը որոշ անձնական տեղեկատվություն կառավարելու կամ հրապարակայնացնելու անձի իրավունքն է, ինչը ծագում է սեփականության իրավունքի երևույթից և հանդիսանում է դրա ամենից կարևոր դրսևորումը, ինչը որոշ իրավական համակարգերում նույնանում է տվյալների պաշտպանության հետ:

10. Ներկայումս անձնական տվյալների պաշտպանության իրավունքը այլևս չի հանդիսանում անձնական տիրույթի իրավունքի բաղադրատարր այլ ինքնուրույն ձևավորված ինստիտուտ է, ինչը հիմնավորվում է մի շարք տարբերություններով՝

Առաջին տարբերությունն այն է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը առաջանում է ավտոմատ՝ անձնական տվյալի ցանկացած մշակման դեպքում, անկախ իրավունքի խախտված լինելու հանգամանքից, իսկ անձնական տիրույթի իրավունքի առաջացման հանգամանքը կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի էությունից և բովանդակությունից:

Երկրորդ տարբերությունն այն է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը ձևավորվել է և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց հարաբերությունները կարգավորելու նպատակով՝ որպես պետությունների դրական պարտավորություն:

Իսկ ահա անձնական տիրույթի իրավունքը, ի սկզբանե՝ սահմանվել էր, որպես հանրային իշխանությունների բացասական, այն է՝ մարդկանց անձնական կյանքի կամայական միջամտությունից խուսափելու պարտավորություն:

Երրորդ տարբերությունն այն է, որ տվյալների պաշտպանության իրավունքը հիմնված է մի շարք լայն պարտավորությունների վրա, որոնք վերաբերում են տվյալների մշակման գործընթացին, օրինակ այն ենթակա է վերահսկման անկախ մարմնի կողմից, ի տարբերություն անձնական տիրույթի իրավունքի:

11. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում գտագործվում է «անձնական կյանքի տվյալներ» տերմինը, որը սահմանափակվում է միայն անձի անձնական կյանքին, ընտանեկան կյանքին, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակին վերաբերող տեղեկություններով, հետևաբար, մարդու մի շարք այլ իրավունքների համար պաշտպանության առավել լայն հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով «անձնական կյանքի տվյալները» պետք է փոխարինել «անձնական տիրույթ» հասկացությամբ (Տե՛ս Հավելված 2):

12. Գիտական գրականության մեջ տարանջատում են սահմանում իրավունքների, սահմանադրական իրավունքների և մարդու իրավունքների միջև, որտեղ իրավունքը բնորոշվում է որպես հիմնականում մասնավոր ոլորտի հորիզոնական հարաբերություններ կարգավորող միմյանց նկատմամբ մարդկանց իրավական պահանջների դրսևորում, իսկ սահմանադրական իրավունքները՝ թեև որոշ դեպքերում կարգավորում են նաև հորիզոնական հարաբերություններ, ի սկզբանե՝ կոչված են կարգավորելու ուղղահայաց հարաբերություններ՝ պետության և քաղաքացիների միջև, և որով պաշտպանված արժեքները կենսական են՝ մարդկային արժանապատվության և անձնական ազատության համար: Եվ վերջապես, մարդու իրավունքները սահմանում են այն միջազգայնորեն ճանաչված կենսական արժեքները, առանց որի մարդկային կյանքը անհնար է կամ պիտանի չէ ապրելու համար, չեն կարող փոխվել օրենսդիր մարմնի կողմից, ձևավորվել են միջազգային մակարդակում և գերակա են ազգային օրենսդրական համակարգերում:

13. Միջազգային իրավական փաստաթղթերում և գիտական գրականությունում, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը դիտարկվում է կամ որպես սահմանադրական կամ մարդու կամ հիմնարար իրավունք՝ հիմնվելով մի շարք տեսությունների վրա, ա) առաջին տեսության հեղինակները հիմնարար իրավունքները դիտարկում են որպես առավելապես սահմանադրական իրավունքներ, քանի որ պաշտպանություն են ստանում աշխարհի տարբեր երկրների սահմանադրություններում, բ) երկրորդ տեսության համաձայն, կան գիտնականներ, որոնք գտնում են թե հիմնարար իրավունքները նույն մարդու իրավունքներն են, քանի որ «մարդու իրավունքներ» հասկացությունը ժամանակի ընթացքում բավականին ընդլայնվել է և ներառում է ոչ միայն առաջին սերնդի մարդու իրավունքները, ինչպիսին են քաղաքական և քաղաքացիական իրավունքները, այլև երկրորդ սերնդի՝ սոցիալական և տնտեսական իրավունքները և երրորդ սերնդի՝ սովորարության իրավունքները, ինչպիսին են՝ ապագա սերնդի իրավունքները,

փոքրամասնությունների իրավունքները և բնապահպանական իրավունքները, գ) երրորդ տեսության կողմնակիցները գտնում են, որ հիմնարար իրավունքները պետք է պաշտպանության առավել բարձր մակարդակ ունենան քան սահմանադրական իրավունքները, քանի որ իրենք օժտված են ավելի բարձր բարոյական արժեքներով ճիշտ ինչպես դասական մարդու իրավունքները:

14. Մարդու իրավունքները հիմնականում հիմնված են բացարձակ կամ պայմանական սահմանափակումների վրա, իսկ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը իր բնույթով արդեն իսկ փոխզիջում է՝ տեղեկատվության ազատ հոսքի և անձնական տվյալների պաշտպանության միջև:

15. Մարդու իրավունքները ավանդաբար, պաշտպանում են բավական սահմանափակ արժեհամակարգ, որոնք կենսական են մարդու անձնական ազատության համար և մարդու անձնական կյանքի կամ շահերի վրա թողնում են նշանակալի ազդեցություն, իսկ «անձնական տվյալ» հասկացության շրջանակը ժամանակի ընթացքում այնքան է լայնացել, որ ներկայումս գրեթե ցանկացած տեղեկատվություն կարելի է որակել, որպես անձնական տվյալ, հետևաբար, անհրաժեշտ է սահմանադրական պաշտպանություն տալ միայն այն տվյալներին, որոնք մարդու շահերի ու իրավունքների վրա ուղիղ և նշանակալի ազդեցություն են ունենանում, ինչի արդյունքում միայն որոշ դեպքեր են դիտարկվում՝ որպես մարդու հիմնարար իրավունքներ, իսկ մնացածները պաշտպանվում են՝ որպես մարդու հասարակ սպառողական իրավունքներ:

16. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում «տվյալ» (data) հասկացությունը բնութագրվում է որպես «տեղեկություն», սակայն, այն չի բացահայտում «տեղեկություն» հասկացության էությունը, իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում՝ տեղեկությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալն է՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից: Միաժամանակ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածներում, «տեղեկության» հետ մեկտեղ կիրառվում է նաև «տեղեկատվություն» (information) տերմինը, հետևաբար համադրելով այս երկու օրենքները՝ ակնհայտ է, որ առաջին դեպքում տվյալը բնութագրվում է որպես տեղեկություն, երկրորդ դեպքում տեղեկությունը բնութագրվում է, որպես տվյալ, իսկ երրորդ դեպքում տեղեկությունը ընկալվում է որպես տեղեկատվություն՝ այդ բոլոր դիտարկելով հոմանիշներ, ինչը թյուրընկալման և հակասող մեկնաբանությունների տեղիք է տալիս:

17. Միջազգային ասպարեզում, վերլուծելով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Եվրոպայի Խորհրդի, Անկախ պետությունների համագործակցության երկրների, ինչպես նաև Եվրոպական Միության, Ճապոնիայի, Չինաստանի, Իսրայելի, Արգենտինայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքին վերաբերող իրավակարգավորումները և կատարելով համեմատական իրավական վերլուծություն Հայաստանի Հանրապետության ներկայիս գործող կառուցակարգերի հետ, հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ «անձնական տվյալ» և

«անձնական տեղեկատվություն» հասկացությունները պետք է տարանջատվեն հստակ սահմանումներով, իսկ սահմանադրական իրավակարգավորումների շրջանակներում, բոլորովին իրավաչափ է տվյալների պաշտպանության քողը տարածել նաև իրավաբանական անձանց վրա:

18. ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի ներկայիս կարգավորումների համաձայն, անձնական տվյալների մշակման ցանկացած դրսևորում, իրենից ենթադրում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջամտություն և էական չէ, թե արդյո՞ք այդ տվյալը խոչընդոտում է անձի մասնավոր կյանքը կամ արդյո՞ք որևէ կերպ խաթարվում է տվյալների սուբյեկտի բնականոն գործունեությունը, ինչը սկզբունքորեն տարբերվում է ՄԻԵԴ-ի կողմից որդեգրած մոտեցումից, քանի որ ՄԻԵԴ-ում այն համարվում է մասնավոր կյանքը հարգելու իրավունքի բաղադրատարր և պաշտպանություն է ստանում կոնվենցիայի 8-րդ հոդվածով, ինչի արդյունքում անձնական տվյալների մշակելու ոչ բոլոր գործընթացներն են, որ պաշտպանություն են ստանում:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հրապարակներում.

1. Անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը որպես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի պատմական նախադրյալ //Գաճառ գիտական տարեգիրք 2018, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, գիտակրթական միջազգային կենտրոն, էջ 113-120

2. «Անձնական տվյալներ». հասկացության էությունն ու իրավական բովանդակությունը// «Հանրային կառավարում» գիտական հանդես 2018, էջ 118-127

3. Անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների հարաբերակցությունը// Արդարադատություն գիտական հանդես 2018, N5 (46), էջ 41-47

4. Անձնական տվյալների դասակարգման անհրաժեշտությունը անձնական տվյալների պաշտպանության համակարգում// Բանբեր արդարադատության ակադեմիայի 2021 N1 (5), հունիս, էջ 75-81

5. Անձնական տվյալների պաշտպանության ամերիկյան մոդելի առանձնահատկությունները// Տարածաշրջան և աշխարհի գիտավերլուծական հանդես հատոր XII, 2021 N (4), հուլիս, էջ 51-56

6. Անձի պատկերը որպես կենսաչափական անձնական տվյալների առանձնահատուկ տեսակ// Արդարադատություն գիտական հանդես, 2021, հունիս 2 (54), էջ 37-43

7. Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում// Մենագրություն, Երևան, «Թասկ» հրատ., 2021թ. 28.5 Տ.Մ

МИНАСЯН ЛУСИНЕ СИМООНВНА ОСНОВНЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА ЗАЩИТУ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ; СРАВНИТЕЛЬНЫЙ ПРАВОВОЙ АНАЛИЗ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена сравнительно-правовому анализу конституционно-правовых проблем концепции защиты персональных данных. Достижения в сфере научно-технического прогресса оказали большое влияние на развитие прав человека. Наряду с положительными тенденциями, сегодня на международном информационном поле существуют качественно новые угрозы и вызовы, которые обязывают государств действовать таким образом, чтобы гарантировать защиту личных прав человека и обеспечивать надлежащий контроль, безопасность и координацию персональных данных. Очевидно, что личные права человека с точки зрения информационной безопасности, должны защищаться не только путем закрепления в законодательстве, но и реализацией конституционных прав защиты персональных данных и неприкосновенности частной и семейной жизни человека.

Между тем, в национальной правовой литературе конституционное право на защиту персональных данных недостаточно изучено, поскольку отсутствует единый подход к структуре, содержанию и особенностям этого права. Также отсутствует четкое единое определение понятий «личная жизнь», «данные», «личная информация» и «личные данные» что в практике их реализации и защиты продолжает создавать правовые коллизии.

Актуальность темы подтверждается и тем фактом, что с каждым днем растет число судебных прецедентов, формирующихся на основании нарушений права на защиту персональных данных как в Республике Армения, так и за рубежом.

Автор впервые в Армении провела анализ и подвергла всестороннему исследованию сущность права человека на защиту персональных данных и его конституционное содержание, исследовала права защиты персональных данных: как признание отдельного конституционного института, защиты и гарантии основополагающих проблем, раскрывая место и роль, в контексте других конституционных прав человека.

Исследовалось историческое становление защиты персональных данных человека, международный опыт, англосаксонские и европейские модели формирования этого института, были выдвинуты оперативные решения проблем ограничения конституционного права по защите персональных данных.

В результате комплексного исследования были выдвинуты не только теоретические выводы концептуального характера, но и были представлены ряд практических предложений, направленных на совершенствование действующих законодательных актов Армении, сформированы новые понятия, выдвинуты конкретные научные подходы для укрепления конституционно-правовых и структурных гарантий защиты прав человека в рамках защиты персональных данных.

В то же время следует отметить, что практическое развитие изучаемого права идет намного быстрее, чем его законодательное регулирование, теоретические обоснования и исследования. Это обстоятельство свидетельствует о том, что для решения существующей проблемы необходимы новые подходы что и предопределило цель, задачи и методологическую основу этого исследования.

MINASYAN LUSINE SIMON
THE MAIN ISSUES OF THE CONSTITUTIONAL RIGHT TO THE
PROTECTION OF PERSONAL DATA:
COMPARATIVE LEGAL ANALYSIS

SUMMERY

This dissertation compiles of comprehensive scientific research that consists of comparative legal analysis on the Constitutional Right to Personal Data Protection. In recent years scientific and technological progress that led to “Technological Revolution” also had a great impact on the development of human rights. Along with positive trends, today we are faced with qualitatively new threats and challenges in the digitalisation domain, which obliges States to act in such a way as to guarantee the protection of personal human rights and to ensure proper coordination, control and security of personal data.

It is apparent that personal human rights in the light of digital security have to be protected not only by being adopted as a law, but also by getting the highest recognition in its scale, scope, and complexity in the Constitution.

Meanwhile, the Constitutional Right to the protection of personal data has never been sufficiently studied in the Armenian national legal literature and as a result there is no unified approach to the structure, content and specifics neither in academia nor in among stakeholders of the global and local politics, public and private sectors or civil society.

At the same time, there is also no clear unified definition of the legal concepts such as “personal life”, “data”, “personal information” and “personal data”, which continues to disrupt the smooth implementation and protection of the Right to Data Protection.

The relevance of the topic is also confirmed by the fact that day by day grows the number of judicial precedents on the subject of violations of the right to personal data protection, both in the Republic of Armenia and abroad.

In this research, the author for the first time in Armenia conducted a comprehensive scientific research on the Constitutional Right to Personal Data Protection, addressing the complicated issues of recognizing, adopting and guaranteeing the right to personal data protection as a separate constitutional institution by defining its place and role among other constitutional human rights. This study analyses the history of the formation of the right to personal data protection, the

